ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 26 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ.

1. «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ն 15.03.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով և 216-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում խնդրել է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210 հոդվածի 1-ին մասը, 216 հոդվածի 2-րդ մասը՝ իրավական անորոշության պատճառով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված իրավական պետության սկզբունքին, 3 հոդվածի, 8 հոդվածի 1-ին մասի, 31 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 43 հոդվածի, իսկ 216 հոդվածի 2-րդ մասը՝ նաև ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր»:

3. Վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացնում է հետևյալ հիմնավորումները. «...վիճարկվող նորմերը չեն համապատասխանում

իրավական որոշակիության պահանջին, քանի որ դրանցում բացահայտված չեն **«սահմանափակ օգտագործման»** և **«իր նշանակությանը համապատասխան»** հասկացությունները, որոնք միայն տվյալ պարագայում կարող են ընկած լինել սեփականության իրավունքի սահմանափակման հիմքում»: «...օրենսդիրը պարտավոր է տալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216 հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «իր նշանակությանը համապատասխան» հասկացության այն նվազագույն չափորոշիչները, որոնք կերաշխավորեին տվյալ հողամասի սեփականատիրոջ և հարակից հողամասի սեփականատիրոջ կողմից իրենց հողամասերի նկատմամբ սեփականության սուբյեկտիվ իրավունքի միաժամանակյա ազատ իրականացումը»:

Դիմողը նշում է նաև, որ նշված հասկացությունը սերտորեն կապված է նաև նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «սահմանափակ օգտագործման» հասկացության հետ: Այս դեպքում ևս օրենսդիրը պարտավոր է տալ այդ հասկացության այն նվազագույն չափորոշիչները, որոնց պայմաններում ուրիշի հողամասից օգտվելը չի վնասի մյուս սեփականատիրոջ՝ իր հողամասը դրա նպատակային նշանակությամբ օգտագործելու իրավունքին:

Ըստ դիմողի՝ օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «իր նշանակությանը համապատասխան» հասկացությունը վիճարկելի է նաև անկախ դրա իրավական անորոշությունից և սահմանադրաիրավական բովանդակությունից, քանի որ այն ինքնին ավելորդ հասկացություն է և անկախ իր իրավական որոշակիությունից՝ խոչընդոտում է սերվիտուտ պահանջող սեփականատիրոջ սեփականության իրավունքի անարգել իրականացմանը:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի վերլուծությունը՝ իրավակիրառ պրակտիկայով պայմանավորված դրա իրավական բովանդակությամբ հանդերձ, վկայում է, որ հոդվածը հնարավորություն է ընձեռում ցանկացած պարագայում, եթե անգամ դատարանը հաստատում է այն փաստը, որ սերվիտուտը տվյալ դեպքում անհրաժեշտ է, **դադարեցնել սերվիտուտը**, քանի որ սերվիտուտի իրավունքի իրացմամբ բոլոր դեպքերում հարակից կամ մեկ այլ հողամասի սեփականատիրոջ իրավունքները որոշակիորեն սահմանափակվում են, իսկ երկու տարբեր սեփականատերերի շահերի հնարավոր բախման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված չեն:

4. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,

- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում ,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

«Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի գործը ընդունել քննության և որպես պատասխանող ներգրավել ՀՀ Ազգային Ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝